


## Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2014 թվականի մարտին


(վերլուծություն)

2014 թվականի մարտին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել է 17984 գործարք, որոնց քանակը 2014 թվականի փետրվարի համեմատ աճել է 6.6 %-ով, իսկ 2013 թվականի մարտի համեմատ՝ 10.5 %-ով:

2014 թվականի մարտին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի և Երևան քաղաքի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2014 թվականի մարտին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2014 թվականի մարտին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 4401 օտարման գործարքների 75.1 %-ը կազմել է առուվաճառքը, 24.5 %-ը՝ նվիրատվությունը և 0.4 %-ը՝ փոխանակությունը: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 40.0 %-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 38.4 %-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանները:

2014 թվականի մարտին, 2014 թվականի փետրվարի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակն աճել է 10.2 %-ով, իսկ 2013 թվականի մարտի համեմատ՝ 6.5 %-ով:

2014 թվականի մարտին Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 62.0 %-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2014 թվականի մարտին, 2014 թվականի փետրվարի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 3.1 %-ով, իսկ 2013 թվականի մարտի համեմատ՝ 8.4 %-ով:

2014 թվականի մարտին Երևան քաղաքի վարչական շրջաններում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների հետևյալ շուկայական միջինացված գները՝ 1 մ<sup>2</sup> մակերեսի հաշվարկով.

Վարչական շրջաններ	Միջին գները (դրամ)		
	մարտ 2013 թ.	մարտ 2014 թ.	փետրվար 2014 թ.
Կենտրոն	426100	428000	428000
Արաբկիր	353500	356600	356600
Քանաքեռ-Զեյթուն	281400	282700	282700
Նոր Նորք	248100	252300	252000
Ավան	256800	260200	260000
Էրեբունի	247100	250600	250600
Շենգավիթ	252500	256100	256100
Դավթաշեն	272000	275150	275150
Աջափնյակ	245000	249400	249400
Մալաթիա-Սեբաստիա	237000	242000	242000
Նուբարաշեն	148000	154900	154900

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2014 թվականի մարտին Երևան քաղաքում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 մ<sup>2</sup> մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2013 թվականի մարտի համեմատ աճել են 0.02%-ով:

2014 թվականի մարտին մարզերում վաճառվել է բազմաբնակարան բնակելի շենքերի 414 բնակարան, որոնց քանակը, 2014 թվականի փետրվարի համեմատ, աճել է 4.6 %-ով, իսկ 2013 թվականի մարտի համեմատ՝ 18.6 %-ով:

2014 թվականի մարտին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների հետևյալ շուկայական միջինացված գները՝ 1 մ<sup>2</sup> մակերեսի հաշվարկով.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները (դրամ)		
		մարտ 2013 թ.	մարտ 2014 թ.	փետրվար 2014 թ.
Արագածոտն	Աշտարակ	114800	115600	115300
	Ապարան	55000	57450	57300
	Թալին	62500	65500	65000
Արարատ	Արտաշատ	94800	95500	95300

	<b>Մասիս</b>	113300	115000	115000
	<b>Վեդի</b>	98500	100300	100000
	<b>Արարատ</b>	75100	75300	75300
<b>Արմավիր</b>	<b>Վաղարշապատ</b>	154000	154150	154150
	<b>Արմավիր</b>	121000	121200	121200
	<b>Մեծամոր</b>	87500	87500	87500
<b>Գեղարքունիք</b>	<b>Սևան</b>	99150	99200	99200
	<b>Գավառ</b>	59000	59800	59800
	<b>Մարտունի</b>	107600	107650	107650
	<b>Վարդենիս</b>	43500	44800	44800
	<b>Ճամբարակ</b>	27500	28700	28700
<b>Լոռի</b>	<b>Վանաձոր</b>	88300	88400	88400
	<b>Ստեփանավան</b>	74500	74500	74500
	<b>Սպիտակ</b>	99800	99800	99800
	<b>Ալավերդի</b>	54800	55000	55000
	<b>Տաշիր</b>	45900	47300	47300
	<b>Թումանյան</b>	11000	11000	11000
	<b>Շամլուղ</b>	8000	8000	8000
	<b>Ախթալա</b>	19800	20200	20200
<b>Կոտայք</b>	<b>Աբովյան</b>	154000	155100	155100
	<b>Նոր Հաճն</b>	128500	128600	128600
	<b>Բյուրեղական</b>	108100	108150	108150
	<b>Եղվարդ</b>	109300	109400	109300
	<b>Հրազդան</b>	63800	63800	63800
	<b>Ծաղկաձոր</b>	292500	292500	292500
	<b>Չարենցավան</b>	85500	85500	85500
<b>Շիրակ</b>	<b>Գյումրի</b>	109300	109300	109300
	<b>Արթիկ</b>	66300	66700	66600
	<b>Մարալիկ</b>	40100	40700	40700
<b>Սյունիք</b>	<b>Գորիս</b>	119000	121900	121900
	<b>Կապան</b>	91500	92300	92300
	<b>Սիսիան</b>	89500	91150	91150
	<b>Մեղրի</b>	78000	80850	80850
	<b>Ագարակ</b>	46000	46900	46900
	<b>Քաջարան</b>	94300	94650	94650
	<b>Դաստակերտ</b>	8000	8000	8000
<b>Վայոց ձոր</b>	<b>Վայք</b>	93000	95000	95000
	<b>Եղեգնաձոր</b>	120000	125000	124850
	<b>Ջերմուկ</b>	111000	112700	112500
<b>Տավուշ</b>	<b>Դիլիջան</b>	110500	113150	113150
	<b>Իջևան</b>	118100	118300	118300
	<b>Բերդ</b>	58100	60200	60200
	<b>Նոյեմբերյան</b>	47000	49900	49900
	<b>Այրում</b>	30100	31850	31850

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2014 թվականի մարտին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 մ<sup>2</sup> մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2013 թվականի մարտի համեմատ մնացել են անփոփոխ:

2014 թվականի մարտին հանրապետությունում արձանագրվել է անհատական բնակելի տների 457 առավաճառքի գործարք, այդ թվում՝ Երևան քաղաքում՝ 124 գործարք, մարզերում՝ 333 գործարք: 2014 թվականի մարտին, 2014 թվականի փետրվարի համեմատ, անհատական բնակելի տների առավաճառքի գործարքների քանակն աճել է 10.1 %-ով, ընդ որում, Երևանում 20.4 %-ով, իսկ մարզերում՝ 6.7 %-ով: 2014 թվականի մարտին 2013 թվականի նույն

Ժամանակահատվածի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 16.0 %-ով, ընդ որում, Երևանում 18.1 %-ով, իսկ մարզերում՝ 15.2 %-ով:

2014 թվականի մարտին Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0 մ<sup>2</sup> և տնամերձի 400.0 մ<sup>2</sup> միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1 մ<sup>2</sup> մակերեսով (ներառյալ տնամերձի միավորի գինը)։

Վարչական շրջաններ	Միջին գները (դրամ)		
	մարտ 2013 թ.	մարտ 2014 թ.	փետրվար 2014 թ.
Կենտրոն	474000	476100	476100
Արաբկիր	381150	383000	383000
Քանաքեռ-Զեյթուն	293450	295000	295000
Նորք-Մարաշ	318400	319200	319200
Ավան	269750	270500	270500
Էրեբունի	238850	239500	239500
Շենգավիթ	253900	255000	255000
Դավթաշեն	275200	276000	276000
Աջափնյակ	249000	250050	250050
Մալաթիա-Սեբաստիա	237100	238000	238000
Նուբարաշեն	149550	150500	150500

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2014 թվականի մարտին Երևան քաղաքում անհատական բնակելի տների շինության 1 մ<sup>2</sup> մակերեսի շուկայական միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը), 2013 թվականի մարտի համեմատ մնացել են անփոփոխ:

2014 թվականի մարտին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0 մ<sup>2</sup> և տնամերձի 1000.0 մ<sup>2</sup> միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1 մ<sup>2</sup> մակերեսով (ներառյալ տնամերձի միավորի գինը)։

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները (դրամ)		
		մարտ 2013 թ.	մարտ 2014 թ.	փետրվար 2014 թ.
Արագածոտն	Աշտարակ	136200	136200	136200
	Ապարան	59500	60050	60050
	Թալին	68650	69250	69250
Արարատ	Արտաշատ	99200	100000	100000
	Մասիս	114600	115100	115100
	Վեդի	101400	102300	102300
Արարատ	Արարատ	88000	88000	88000
	Վաղարշապատ	153100	153100	153100
	Արմավիր	107000	107000	107000
Գեղարքունիք	Սևան	94800	94800	94800
	Գավառ	57100	57100	57100
	Մարտունի	96000	96100	96100
	Վարդենիս	39800	41000	41000
	Ճամբարակ	30000	31100	31100
Լոռի	Վանաձոր	100000	100000	100000
	Ստեփանավան	89800	90000	90000
	Սպիտակ	114000	114000	114000
	Ալավերդի	48300	50200	50200

	Տաշիր	51900	51900	51900
	Թումանյան	12000	12000	12000
	Շամլուղ	14000	14000	14000
	Ախթալա	30000	30000	30000
Կոտայք	Աբովյան	155800	157000	157000
	Նոր Հաճն	129800	129800	129800
	Բյուրեղավան	120500	120500	120500
	Եղվարդ	116100	116100	116100
	Հրազդան	82400	82600	82600
	Ծաղկաձոր	305000	305000	305000
	Չարենցավան	83000	83000	83000
Շիրակ	Գյումրի	118500	118500	118500
	Արթիկ	63100	63100	63100
	Մարալիկ	52000	52000	52000
Սյունիք	Գորիս	130000	130000	130000
	Կապան	99500	100000	100000
	Սիսիան	95000	96500	96500
	Մեղրի	83500	84500	84500
	Ագարակ	46900	46900	46900
	Դաստակերտ	11610	11610	11610
Վայոց ձոր	Վայք	89000	90050	90050
	Եղեգնաձոր	116600	116600	116600
	Ջերմուկ	130000	131300	131300
Տավուշ	Դիլիջան	111100	113000	113000
	Իջևան	122000	123200	123200
	Բերդ	59000	60100	60100
	Նոյեմբերյան	47000	48300	48300
	Այրում	35100	36250	36250

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2014 թվականի մարտին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1 մ<sup>2</sup> մակերեսի շուկայական միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը), 2013 թվականի մարտի համեմատ մնացել են անփոփոխ:

Ընդհանուր առմամբ, 2014 թվականի մարտին հանրապետությունում օտարվել է 1404 միավոր (583.27 հա) հող, որից Երևանում՝ 153 միավոր (11.14 հա): Օտարված հողերն, ըստ նպատակային նշանակության, բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 729 միավոր (522.79 հա), որից Երևանում՝ 6 միավոր (0.26 հա),
- բնակելի կառուցապատման հողեր՝ 391 միավոր (35.57 հա), որից Երևանում՝ 61 միավոր (2.44 հա),
- հասարակական կառուցապատման հողեր՝ 158 միավոր (15.97 հա), որից Երևանում՝ 74 միավոր (6.96 հա),
- արդյունաբերական օբյեկտների հողեր՝ 26 միավոր (3.84 հա), որից Երևանում՝ 12 միավոր (1.48 հա),
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հողեր՝ 6 միավոր (2.75 հա),
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողեր՝ 94 միավոր (2.35 հա) ընդհանուր մակերեսով:

2014 թվականի մարտին հանրապետությունում օտարված հողերից 1153 միավորի (492.61 հա) նկատմամբ իրականացվել է առուվաճառքի գործարք, որից Երևանում՝ 124 միավոր (9.77 հա), նվիրատվության գործարքներ՝ 243 միավորի (86.28 հա), որից Երևանում՝ 27 միավոր (1.26 հա) և փոխանակության գործարքներ՝ 8 միավորի (4.38 հա), որից Երևանում՝ 2 միավոր (0.11 հա):

Հանրապետությունում 2014 թվականի մարտին, 2013 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքների քանակն աճել է 1.0 %-ով: Ընդ որում, գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակն աճել է 2.3 %-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ նվազել է 18.3 %-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ աճել է 91.7 %-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 89.05 հա, որից 83.62 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 20.7 %-ը կամ 239 միավորը (50.88 հա) հանդիսացել է պետական կամ համայնքային սեփականության հող, որից Երևանում՝ 52 միավոր (1.44 հա), իսկ 78.3 %-ը կամ 903 միավորը (439.03 հա) հանդիսացել է մասնավոր սեփականության հող, որից Երևանում՝ 71 միավոր (8.13 հա): 2014 թվականի մարտին հանրապետությունում գրանցվել է հողերի կառուցապատման իրավունքի վաճառքի 11 գործարք (2.71 հա):

Ստորև ներկայացվում է 2014 թվականի մարտին պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը և կառուցապատման իրավունքի վաճառքները:

	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող								Մասնավոր սեփականություն հանդիսացող							
	Գյուղ. նշանակության հողեր		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղ. նշանակության հողեր		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր		հասարակական կառուցապատ. հողեր						բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր		հասարակական կառուցապատ. հողեր	
	Միավոր	Մակերեսը (հա)	Միավոր	Մակերեսը (հա)	Միավոր	Մակերեսը (հա)	Միավոր	Մակերեսը (հա)	Միավոր	Մակերեսը (հա)	Միավոր	Մակերեսը (հա)	Միավոր	Մակերեսը (հա)	Միավոր	Մակերեսը (հա)
Երևան	0	0.00	5	0.21	17	0.31	30	0.92	5	0.23	4	0.95	27	1.41	35	5.53
Արագածոտն	2	0.49	3	0.34	0	0.00	2	0.05	51	48.79	0	0.00	14	2.14	3	0.02
Արարատ	3	2.18	0	0.00	7	0.37	4	0.02	160	78.37	3	0.09	44	4.33	8	0.15
Արմավիր	5	2.45	0	0.00	2	0.27	1	0.004	94	81.16	0	0.00	53	5.13	4	0.03
Գեղարքունիք	2	1.17	0	0.00	3	0.24	8	0.19	7	10.55	0	0.00	27	4.02	0	0.00
Լոռի	0	0.00	1	0.20	3	0.02	6	0.53	65	51.12	0	0.00	11	0.93	6	0.12
Կոտայք	6	20.28	0	0.00	9	0.39	2	0.06	75	29.89	1	0.40	46	3.64	10	0.81
Շիրակ	2	1.00	1	0.39	4	0.03	0	0.00	61	72.07	0	0.00	14	1.53	2	0.02
Սյունիք	0	0.00	3	0.08	1	0.16	0	0.00	8	9.38	0	0.00	4	0.35	3	0.04
Վայոց ձոր	8	13.60	0	0.00	1	0.01	0	0.00	16	13.21	0	0.00	1	0.09	0	0.00
Տավուշ	3	1.82	0	0.00	4	0.14	4	0.80	13	5.23	2	0.86	6	0.58	11	5.40
Ընդամենը	31	42.99	13	1.22	51	1.94	57	2.57	555	400.00	10	2.30	247	24.15	82	12.12

Ստորև ներկայացված է 2014 թվականի մարտին պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի, Երևան քաղաքի և ըստ հողերի նպատակային նշանակության, որտեղ ներառված չեն հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը:

	Ուղղակի վաճառք								Վաճառք աճուրդով									
	Ընդամենը		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողեր		Գյուղ. նշանակության հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապ. (տնամերձ) հողեր		հասարակական կառուցապ. հողեր								բնակելի կառուցապ. (տնամերձ) հողեր		հասարակական կառուցապ. հողեր	
	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)
Երևան	44	1.26	5	0.21	17	0.31	22	0.74	8	0.18	0	0.00	0	0.00	0	0.00	8	0.18
Արագածոտն	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	7	0.88	2	0.49	3	0.34	0	0.00	2	0.05
Արարատ	2	0.01	0	0.00	0	0.00	2	0.01	12	2.56	3	2.18	0	0.00	7	0.37	2	0.01
Արմավիր	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	7	2.004	4	1.73	0	0.00	2	0.27	1	0.004
Գեղարքունիք	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	13	1.60	2	1.17	0	0.00	3	0.24	8	0.19
Լոռի	3	0.02	0	0.00	2	0.01	1	0.01	7	0.73	0	0.00	1	0.20	1	0.01	5	0.52
Կոտայք	3	0.16	0	0.00	3	0.16	0	0.00	10	16.87	2	16.59	0	0.00	6	0.23	2	0.05
Շիրակ	1	0.02	0	0.00	1	0.02	0	0.00	6	1.40	2	1.00	1	0.39	3	0.01	0	0.00
Սյունիք	1	0.16	0	0.00	1	0.16	0	0.00	3	0.08	0	0.00	3	0.08	0	0.00	0	0.00
Վայոց ձոր	1	0.01	0	0.00	1	0.01	0	0.00	8	13.60	8	13.60	0	0.00	0	0.00	0	0.00
Տավուշ	1	0.002	0	0.00	1	0.002	0	0.00	10	2.76	3	1.82	0	0.00	3	0.14	4	0.80
Ընդամենը	56	1.64	5	0.21	26	0.67	25	0.76	91	42.66	26	38.58	8	1.01	25	1.27	32	1.80

2014 թվականի մարտին հանրապետությունում արձանագրվել է նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 5 գործարք (4.41 հա ընդհանուր մակերեսով):

Հանրապետությունում 2014 թվականի մարտին, 2013 թվականի մարտի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 48.3 %-ով: Ընդ որում, Երևանում նվազել է 66.7 %-ով, իսկ մարզերում՝ 45.4 %-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 44.7 %-ով, բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի նկատմամբ՝ 68.4 %-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ՝ 23.8 %-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ աճել է 2 անգամ:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2014 թվականի մարտին գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները:

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանում	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքներ աճուրդով					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքներ				
	Միավորների քանակ	Մակերես (հա)	պայմանագրային գները՝ 1 հա մակերեսի հաշվարկով (հազար դրամ)			Միավորների քանակ	Մակերես (հա)	շուկայական գները՝ 1 հա մակերեսի հաշվարկով (հազար դրամ)		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
<b>Արագածոտնի մարզ</b>										
Աշտարակ	2	0.49	193.6	201.7	197.6	31	12.32	365.0	12000.0	3472.5
Ապարան						1	0.13	86.5	2727.3	706.0
Թալին						13	31.93	93.6	5494.5	710.0
Ծաղկահովիտ						2	2.99	79.5	1000.0	300.0
<b>Արարատի մարզ</b>										
Արտաշատ						42	10.05	335.1	10833.3	2619.3
Մասիս	1	0.12	187.7	187.7	187.7	13	6.93	200.0	11904.8	2933.3
Վեդի	2	2.07	69.0	290.8	179.9	103	60.64	207.0	10795.1	1815.0
<b>Արմավիրի մարզ</b>										
Արմավիր	4	1.73	1059.3	1065.4	1061.9	43	24.75	294.3	9090.0	1216.5
Բաղրամյան						23	43.48	90.6	2561.1	800.0

Վաղարշապատ						22	9.68	444.4	11764.7	2115.0
<b>Գեղարքունիքի մարզ</b>										
Գավառ						1	0.06	199.8	1875.0	430.0
Ճամբարակ								60.5	953.3	355.2
Մարտունի	1	0.12	128.3	128.3	128.3	1	0.35	51.1	2850.0	752.5
Սևան						1	0.13	52.2	2134.8	328.5
Վարդենիս	1	1.05	407.2	407.2	407.2	4	10.01	41.2	2575.1	403.0
<b>Լոռու մարզ</b>										
Ալավերդի						6	2.76	170.4	6424.2	576.5
Գուգարք						40	26.87	234.6	6065.9	805.0
Սպիտակ						2	0.62	250.0	5555.5	720.0
Ստեփանավան						5	4.87	90.6	1686.6	350.0
Տաշիր						12	16.01	45.3	1384.4	175.3
<b>Կոտայքի մարզ</b>										
Աբովյան	1	13.59	1155.0	1155.0	1155.0	37	7.82	279.3	11942.7	3969.5
Եղվարդ						21	15.50	174.4	11971.8	2365.0
Հրազդան	1	3.00	635.8	635.8	635.8	15	6.19	130.5	10256.4	1385.0
<b>Շիրակի մարզ</b>										
Ախուրյան	2	1.00	293.8	295.0	294.4	16	10.54	252.0	1693.1	651.5
Ամասիա						1	8.50	40.9	261.0	127.0
Անի						34	44.15	110.6	546.9	418.0
Աշոցք						3	2.03	58.5	215.8	134.2
Արթիկ						7	6.86	79.4	1428.6	448.2
<b>Սյունիքի մարզ</b>										
Գորիս						1	1.57	92.6	1023.2	742.5
Կապան								120.0	841.6	375.5
Մեղրի						4	0.58	193.0	3000.0	745.0
Սիսիան						3	7.22	46.3	1977.4	550.0
<b>Վայոց ձորի մարզ</b>										
Եղեգնաձոր	2	11.60	330.3	382.3	356.3	13	12.47	125.0	10000.0	1950.0
Վայք	6	2.00	8505.0	8506.3	8505.4	3	0.73	58.8	1430.7	652.0
<b>Տավուշի մարզ</b>										
Բերդ						1	0.19	213.3	3783.8	690.0
Իջևան						8	1.79	267.5	9454.5	1272.0
Նոյեմբերյան	3	1.82	162.9	1518.7	614.9	4	3.25	46.7	7368.4	930.0

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կապված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2014 թվականի մարտին բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1000.0 մ<sup>2</sup> մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները:

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանում	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի վաճառքներ աճուրդով					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի վաճառքներ				
	Միավորների քանակ	Մակերես (մ <sup>2</sup> )	պայմանագրային գները 1000.0 մ <sup>2</sup> մակերեսի հաշվարկով (հազար դրամ)			Միավորների քանակ	Մակերես (մ <sup>2</sup> )	շուկայական գները 1000.0 մ <sup>2</sup> մակերեսի հաշվարկով (հազար դրամ)		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
<b>Արագածոտնի մարզ</b>										
Աշտարակ						13	15768.0	130.7	22200.0	2583.1
Ապարան								124.1	609.6	390.0
Թային								63.2	1454.8	152.3
Ծաղկահովիտ						1	5610.0	60.0	214.3	93.0
<b>Արարատի մարզ</b>										
Արտաշատ	4	3602.0	166.9	948.8	467.8	8	14435.0	173.9	7140.3	901.0
Մասիս	3	124.3	3167.3	3647.5	3386.4	27	19086.7	187.5	25000.0	1205.5



Վեդի						9	9791.0	126.1	5000.0	661.5
Արմավիրի մարզ										
Արմավիր						20	20705.0	131.6	9090.9	1213.5
Բաղրամյան						1	1200.0	100.0	833.3	240.0
Վաղարշապատ	2	2734.7	157.4	294.0	225.7	30	26695.0	197.4	26528.4	1530.0
Գեղարքունիքի մարզ										
Գավառ	1	375.2	110.0	110.0	110.0	8	11841.7	186.6	1084.3	683.8
Ճամբարակ								71.3	2286.2	148.1
Մարտունի	2	1979.7	112.6	114.9	113.8	13	21267.9	119.3	5000.0	283.7
Սևան						5	5608.3	240.0	3110.4	325.0
Վարդենիս						1	1458.0	72.5	987.2	150.0
Լոռու մարզ										
Ալավերդի	1	88.6	1650.0	1650.0	1650.0	3	1780.0	114.3	1388.9	217.0
Գուգարք						2	2625.0	77.9	14083.3	1260.0
Սպիտակ						2	569.5	104.9	1348.3	204.7
Ստեփանավան						2	1320.0	88.2	1666.7	175.5
Տաշիր						1	1760.0	45.3	400.0	90.0
Կոտայքի մարզ										
Աբովյան	1	400.0	3087.0	3087.0	3087.0	22	16503.0	264.5	35353.5	1981.3
Եղվարդ	5	1860.2	1279.5	3257.5	2420.7	23	19329.5	173.6	27000.0	2859.3
Հրազդան						1	600.0	117.7	34848.5	1320.0
Շիրակի մարզ										
Ախուրյան						5	4375.0	113.6	18750.0	333.7
Ամասիա								45.3	274.7	71.0
Անի						2	2050.0	67.9	180.6	183.0
Աշոցք								40.8	144.0	65.0
Արթիկ	3	78.0	2208.3	4333.3	3097.2	7	8892.4	111.8	5000.0	217.8
Սյունիքի մարզ										
Գորիս								112.2	1700.0	365.0
Կապան						2	1080.0	67.9	2638.9	313.0
Մեղրի						1	1190.0	68.5	632.9	222.5
Սիսիան						1	1180.0	123.5	875.0	223.0
Վայոց ձորի մարզ										
Եղեգնաձոր								96.7	7659.6	507.7
Վայք						1	875.5	120.7	1448.3	238.5
Տավուշի մարզ										
Բերդ								75.8	810.0	121.5
Իջևան	3	1399.7	220.0	3000.0	1549.5	4	3877.0	74.1	14423.1	524.3
Նոյեմբերյան						2	1880.0	125.0	1948.1	230.0

2014 թվականի մարտին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 765 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 4.3 %-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների 71.5 %-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

2014 թվականի մարտին, 2014 թվականի փետրվարի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը նվազել է 10.3 %-ով, իսկ 2013 թվականի մարտի համեմատ՝ 2.3 %-ով:

2014 թվականի մարտին հանրապետությունում գրանցվել է բազմաբնակարան բնակելի շենքերի 41 բնակարանի, 76 անհատական բնակելի տան, 361 հասարակական, 118 արտադրական նշանակության օբյեկտի, 156 հողի և 13 ավտոտնակի վարձակալության գործարք: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքի պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2014 թվականի մարտին Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 9 վարձակալության գործարքի քանակը 2014 թվականի փետրվարի համեմատ աճել է 80.0 %-ով, իսկ 2013 թվականի մարտի համեմատ՝ նվազել 47.1 %-ով: 2014 թվականի մարտին հանրապետությունում վարձակալված 236.05 հա հողերից 1.11 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 234.94 հա

հողերից 189.10 հա կազմում են գյուղատնտեսական նշանակության, 2.21 հա արդյունաբերական օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Սյունիքի մարզում՝ 112.64 հա, որից 74.01 հա գյուղատնտեսական նշանակության:

2014 թվականի մարտին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 2373 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 13.2 %-ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2014 թվականի փետրվարի համեմատ, աճել է 13.0 %-ով, իսկ 2013 թվականի մարտի համեմատ՝ 19.9 %-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների (54.3 %), անհատական բնակելի տների (24.0 %), հասարակական նշանակության օբյեկտների (10.5 %) և հողերի (5.3 %) նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1295 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2014 թվականի փետրվարի համեմատ աճել է 12.5 %-ով, իսկ 2013 թվականի մարտի համեմատ՝ 16.9 %-ով:

2014 թվականի մարտին հանրապետությունում գրավադրվել է 136.09 հա հող, որից 13.71 հա՝ Երևանում: Ընդ որում, գրավադրված հողերի 80.7 %-ը կամ 109.76 հա գյուղատնտեսական նշանակության են: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արարատի մարզում՝ 47.95 հա, որից 46.94 հա գյուղատնտեսական նշանակության:

2014 թվականի մարտին հանրապետությունում իրականացվել է հիփոթեքային գրավադրման 151 գործարք: 2014 թվականի մարտին հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը 2014 թվականի փետրվարի համեմատ նվազել է 9.0 %-ով, իսկ 2013 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ՝ 5.0 %-ով:

Երևանում իրականացվել է հիփոթեքային գրավադրման 106 գործարք, որը 2014 թվականի փետրվարի համեմատ նվազել է 12.4 %-ով, իսկ 2013 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ՝ 7.0 %-ով: Մարզերում հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը 2014 թվականի փետրվարի և 2013 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ մնացել է անփոփոխ:

2014 թվականի մարտին հանրապետությունում արձանագրվել է անշարժ գույքի սեփականության իրավունքի 2209 առաջնային գրանցում՝ առանց գործարքի, որոնց քանակը 2014 թվականի փետրվարի համեմատ աճել է 37.0 %-ով, իսկ 2013 թվականի մարտի համեմատ՝ 10.5 %-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 12.3 %: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում (27.6 %):

## **«Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե**